ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր №

№ 04/23.1/1114-18
«15» 02 2018 թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 2018 թվականի փետրվարի 12-ի N 327-ի 9 գրության, հայտնում ենք հետևյալը.

1. *Քանի՞ էլեկտրոնային հարցում է ստացել Ձեր գերատեսչությունը 2015 թ.-ին, 2016թ.-ին և 2017թ.-ին:*

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը 2015 թվականին ստացել է 248 էլեկտրոնային հարցում, 2016 թվականին՝ 362 էլեկտրոնային հարցում, 2017 թվականին՝ 423 էլեկտրոնային հարցում:

2. *Էլեկտրոնային հարցումներից քանիսի՞ն է պատասխան տրամադրվել էլեկտրոնային և քանիսին գրավոր եղանակով՝ ըստ տարիների:*

Էլեկտրոնային հարցումներին պատասխանները տրամադրվել են հիմնականում էլեկտրոնային եղանակով: Միաժամանակ, պատասխան պաշտոնական նամակների թղթային տարբերակները՝ նախարարի, փոխնախարարների կամ աշխատակազմի ղեկավարի ստորագրությամբ, ուղարկվել են հասցեատերերին, եթե հարցումն ուղարկողի կողմից նշված չի եղել, որ էլեկտրոնային տարբերակով պատասխանն իրենց բավարարում է:

Ըստ այդմ՝

2015 թվականին՝ 248 պատասխաններից 215-ն ուղարկվել է և՛ էլեկտրոնային, և՛ գրավոր եղանակով, 33-ը՝ միայն էլեկտրոնային եղանակով:

Կատարող՝ Անժելինա Չիլինգարյան
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
011 597212

2016 թվականին՝ 362 պատասխաններից 310-ն ուղարկվել է և՛ էլեկտրոնային, և՛ գրավոր եղանակով, իսկ 52-ը՝ միայն էլեկտրոնային եղանակով:

2017 թվականին՝ 423 պատասխաններից 337-ն ուղարկվել է և՛ էլեկտրոնային, և՛ գրավոր եղանակով, իսկ 86-ը՝ միայն էլեկտրոնային եղանակով:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ